

## ԲԱԶՄԱՇՆՈՐՀ ԼԵԶՎԱԲԱՆԸ ԵՎ ՀՄՈՒՑ ՀԱՅԵՐԵՆԱԳԵՏԸ



2021 թ. ապրիլի 17-ին՝ կյանքի 80-րդ տարում, վախճանվեց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Լիանա Սամվելի Հովսեփյանը:

Անհատի երկրային կյանքի ավարտը, երբ նա մեզ հետ չէ այլևս և չի կարող ներկայությամբ ազդել իր մասին ասվող խոսքի վրա, ճանաչողներին որոշակի ազատություն է տալիս կարծիքն արտահայտելու հարցում: Իհարկե, հետմահու հնչող առանձին գնահատականները ևս կարող են զերծ չլինել սուբյեկտիվ երանգավորումներից, բայց այդպիսի մի քանի գնահատականները կուրվագծեն այն կերպարը, որն անպայմանորեն կլինի անաչառության տիրույթում: Այս գիտակցությամբ պիտի փորձենք տալ մեր ավագ գործընկերոջ՝ Լ. Հովսեփյանի գիտական գործունեության գնահատականը:

Լ. Հովսեփյանը հեղինակել է 4 մենագրություն [իմմտ. «Սովետահայ լեզվաբանությունը 60 տարում» (1982), «Գրաբարի բառակազմությունը» (1987), «ԺԳ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն» (1997), «Գրաբարի բառակազմական վերլուծական տիպը» (2016)]: Նշվածներից «Գրաբարի բառակազմական վերլուծական տիպը» (2016)]: Նշվածներից «Գրաբարի բառակազմությունը», որի համար հեղինակին շնորհվել է բան. գիտ. դոկտ. գիտական աստիճան, արժեքավոր ներդրում է հին գրական հայերենի բառակազմության ուսումնասիրության ոլորտում և, եթե չենք սխալվում, առայժմ այդպիսի միակ ուսումնասիրությունը: Նա եռալեզու՝ «Գերմաներեն-հայերեն-ռուսերեն զրուցագրքի» (2003) և «Հայոց լեզու. Գրականություն» (2006) գրքի համահեղինակ էր: Անվանի լեզվաբանը հրապարակել է նաև շուրջ 80 գիտական հոդված, այդ թվում՝ հանրագիտարանային բառահոդվածներ և գրա-

խոսություններ, որոնցում քննության նյութ են դարձել ինչպես գրական հայերենի զարգացման երեք փուլերի (գրաբար, միջին հայերեն և աշխարհաբար) տարբեր հիմնախնդիրներ, այնպես էլ ի մի են բերվել և արժևորվել հայ լեզվաբանության արդի շրջանի գիտական ձեռքբերումները, տրվել է լեզվաբանական մտքի (այդ թվում՝ դասական հայերենագիտության) առանձին նշանավոր ներկայացուցիչների կյանքի և գործի համառոտ բնութագիրը (Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Ֆ. Ֆորտունատով):

Կա գրավոր խոսքի մի ոլորտ, որից շատերը հաճախ խուսափում են: Դա ժամանակակցի մասին գնահատանքի խոսքն է հոբեյանական ադիթներով և մահախոսական՝ գործընկերոջ մասին: Ընդ որում, խուսափում են հատկապես այն պատճառով, որ նման դեպքերում ոչ միշտ է հաջողվում մնալ հավասարակշռված խոսքի սահմաններում: Աչքի անցկացնելով Լ. Հովսեփյանի հրապարակված աշխատությունների ցանկը՝ տեսնում ենք, որ նա չի խուսափել նաև այդօրինակ խոսքից՝ կարողանալով և՛ պատշաճը հատուցել հոբեյարին կամ հանգուցյալին, և՛ խուսափել ծայրահեղություններից (հմմտ. «Վաստակաշատ լեզվաբանը (Վ. Քոսյան)» // Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում, 1997, «Գևորգ Զահուկյան (ծննդյան 80-ամյակի առթիվ)» // ԲԵՀ, 3, 2000, «Հարատևող ներկայություն (Գևորգ Զահուկյանի ծննդյան 90-ամյակին)» // ԲԵՀ. Բանասիրություն, 2 (131), 2010, էջ 75-77): Նրա սիրած արտահայտություններից էր՝ նախընտրել «պարզին վսեմագույնը», որովհետև իրավացիորեն կարծում էր, որ բարդ ու խճողված ձևակերպումներով խոսքը դեռևս խորքային լինելու նշան չէ:

Պրոֆ. Լ. Հովսեփյանի՝ գերմաներենից կատարված թարգմանությամբ առաջին անգամ հայերենով լույս է տեսել գերմանացի նշանավոր հայագետ Հայնրիխ Հյուբշմանի «Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում» մեծարժեք ուսումնասիրությունը (Պատմա-բանասիրական հանդես, 1985, N 4, էջ 27-54), որը, դնելով հայերենի՝ որպես հնդեվրոպական լեզվաընտանիքում ինքնուրույն լեզվաճյուղի տեսության սկիզբը, նոր դարագլուխ բացեց հայերենագիտության զարգացման մեջ (ի դեպ, թարգմանիչը նշված չէ):

Լ. Հովսեփյանը միաժամանակ գիտական նորարարության կիրառման ջատագով էր. նա զբաղվում էր հայերենի ձևայնացված նկարագրության կադապարի մշակման հարցերով, իսկ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դասավանդման առարկայացանկում նրա առաջարկությամբ վերջին տարիներին մտցվեց *համակարգչային լեզվաբանություն* դասընթացը, որի առաջին դասավանդողը, բնականաբար, ինքն էր:

Հայերենի և հայերենագիտության հիմնահարցերին նվիրված՝ Լ. Հովսեփյանի մի շարք հոդվածներ լույս են տեսել արտերկրի գիտական հանդեսներում և պարբերականներում [հմմտ. Developmant of Armenian Language Module of UNL // Convergences'03, Alexandria, Egypt, 2003 (համահեղ.՝ Վ. Ավետիսյան), Армянский язык и диалекты // Армяне / серия Народы и культуры, М., 2012, с. 75-81, Восточноармянский литературный язык (общий обзор) // «Языки мира, Реликтовые и.-е. языки Передней и Центральной Азии», М., 2013, с. 242-291 և այլն]: Թեպետ Լ. Հովսեփյանի գիտական ժառանգությունը ինչպես քանակական, այնպես էլ ծավալային առումով չի կարող համեմատվել մեր մեծ երախտավորների, այդ թվում՝ իր ուսուցիչների, օր.՝ Է. Աղայանի, Գ. Զահուկյանի և Հ. Բարսեղյանի թողած գիտական ժառանգության հետ, բայց նրա հրապարակումներին բնորոշ թեմատիկ լայն ընդգրկումը և հարցադրումների գիտական խորությունը հիմք են տալիս ասելու, որ գործ ունենք լայն մտահորիզոնով և համակարգային մտածողությամբ օժտված գիտնականի հետ:

Պրոֆ. Լ. Հովսեփյանի գիտական ներուժը գնահատել են գործընկերները և գիտակրթական ոլորտի ղեկավարությունը, ինչպես որ սովորաբար գնահատում են գիտության գործչի վաստակն ու կարողությունները: Տասնամյակներ ի վեր նա եղել է ԲՈՀ/(ԲՈԿ)-ի՝ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտին կից գործող լեզվաբանության գծով գիտական աստիճանաշնորհող խորհրդի, ինչպես նաև հանրապետության տարբեր գիտական հանդեսների խորհուրդների անդամ: Իր գիտամանկավարժական արդյունավետ գործունեության համար նա արժանացել է մի շարք գովեստագրերի և պարգևների, այդ թվում՝ ԵՊՀ ոսկե մեդալի (2014) և «Մովսես Խորենացի» մեդալի (2014): Լ. Հովսեփյանի գիտական կենսագրության մեջ ուրույն տեղ ունեն 2010-2019 թթ., երբ նա «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» պրակի պատասխանատու խմբագիրն էր: «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի տրոհումը մասնագիտական ուղղվածության պրակների եթե մի կողմից՝ մեծացրեց ոլորտի մասնագետների հրապարակվելու հնարավորությունները, մյուս կողմից, սակայն, պրակները որակյալ հոդվածներով ապահովելու որոշակի դժվարություններ առաջացրին: Ոչ հազվադեպ ականատես ենք եղել, թե Լ. Հովսեփյանը որքան ջանքեր էր գործադրում միջակ նյութերից հրապարակման համար պիտանի հոդվածներ պատրաստելու համար: Հաճախ էլ այդ ջանքերը ոչ այնքան ուղղված էին հանդեսի հերթական համարի պատշաճ մակարդակով թողարկմանը, որքան գիտության փշոտ ճանապարհին առաջին քայլերը կատարող վաղվա գիտնականի առջև ուղի հարթելուն: Բայց չէ՞ որ դա

ժամանակի և էներգիայի շռայլում էր, որն ուղղակիորեն չէր մտնում նրա՝ իբրև խմբագրի պարտականությունների մեջ: Եվ չէ՞ որ այդ ժամանակն ու էներգիան կարող էին ծառայել սեփական գիտական արտադրանքի ստեղծմանը: Նա հայոց լեզվի պատմության մերօրյա հմուտ տեսաբաններից էր և, ինչպես երբեմն ինքն էր դառնությամբ խոստովանում, պարտավոր էր այդպիսի մենագրություն գրել, բայց այդպես էլ այդ աշխատությունը չգրվեց:

Լ. Հովսեփյանը նաև գիտական կյանքի կազմակերպիչ էր: 1997-2013 թթ. նա պաշտոնավարել է ԵՊՀ-ում՝ որպես *ընդհանուր լեզվաբանության* ամբիոնի վարիչ: Իբրև ամբիոնի վարիչ՝ նրա պաշտոնավարման տարիների ամենից մեծ ձեռքբերումը, մեր կարծիքով, այն էր, որ, օգտվելով տարեցտարի ավելացող ժամաքանակի ընձեռած հնարավորություններից, նա ամբիոնի գիտամանկավարժական կյանքի մեջ ներգրավեց մի շարք հմուտ մասնագետների և հեռանկարային երիտասարդ կադրերի՝ լեզվաբանների և դասական լեզուների գիտականների, որոնց համախմբումը էապես մեծացրեց ամբիոնի գիտական ներուժը: Լ. Հովսեփյանի ղեկավարությամբ պաշտպանվել է շուրջ 1 տասնյակի հասնող թեկնածուական ատենախոսություն:

Թերևս քչերին է հայտնի, որ լեզվաբանական հետաքրքրություններից բացի, Լիանա Հովսեփյանն ուներ, այսպես ասած, նաև գեղարվեստական հետաքրքրություններ. նա թարգմանություններ էր կատարում ռուս դասական պոեզիայից: Թարգմանությունների այդպիսի մի փունջ՝ կատարված ռուս հանճարեղ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի ստեղծագործություններից, 2019 թ. ամռանը տպագրվեց «Գրական թերթի» էջերում՝ մեծ բանաստեղծի ծննդյան 220-ամյակի առիթով (այդ թարգմանությունները թյուրիմացաբար հրապարակվել են **Լիա Հովհաննիսյան** անուն-ազգանունով):

Պրոֆ. Լ. Հովսեփյանի գիտական կենսագրությունը սկսվեց ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրայից (1967) և ավարտվեց նույն հաստատությունում՝ մասնագիտական գործունեության 54 տարիների ընթացքում կրտսեր գիտաշխատողից հասնելով մինչև տնօրենի տեղակալի: Նա գիտական այն սերնդի ներկայացուցիչներից էր, որոնք որպես հայերենագետ-լեզվաբաններ կայացան ակադեմիկոս Գ. Զահուկյանի կողքին՝ վերջինիս ներկայությամբ իսկ թելադրվող գիտական բարձր նշանոցների պայմաններում: Աներկբա կարելի է ասել, որ պրոֆ. Լ. Հովսեփյանը «ջահուկյանական գվարդիայի» վառ ներկայացուցիչներից էր:

## ՎԱՐԴԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու